## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար լազերային տպիչների և ձայնագրառման համակարգերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/16» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «13» ապրիլի 2022թ.
Ժամը՝ 17:15

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Խորեն Պետրոսյան՝** Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի պարտականությունները ժամանակավորապես կատարող, համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

**Արթուր Թամրազյան՝** Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

**Տիգրան Զեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարարի ժամանակավոր պաշտոնակատար

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

**1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/16» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.**

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 7-րդ օրվա (11.04.2022թ.)՝ ժամը 15:00-ն.
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 12.04.2022թ.՝ ժամը 15:00-ին:

**2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գների վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները՝ մեկ թվով արտահայտված.

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | Լազերային տպիչներ | 39087000 |
| 2 | Ձայնագրառման համակարգեր | 45600000 |

**3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝**

| Մասնակցի անվանումը (անունը) | Մասնակցի գործունեության հասցեն |
|---|---|
| Ջուզեպպե ՍՊԸ | Հ. Հովհաննիսյան 24/7 |
| ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ | ք. Երևան, Չարենցի 37 |
| ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ | Գայի 31 |

**4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.**

10.04.2022թ.-ին՝ ժամը 13:40-ին գնահատող հանձնաժողովի քարտուղարի ddgnumner@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին hovhannes.baburyan@unicomp.am էլեկտրոնային փոստի հասցեից ստացվել է նամակ (Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից):

11.04.2022թ.-ին հրավիրված գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստում գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է ստացված հիմնավորումները և արդյունքում կայացրել որոշում:

*/հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը կցվում է/*

**5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**
Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**6. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/16» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.**

| Հ/Հ | Մասնակցի անվանումը (անունը) | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեք ՀՀ դրամ | ԱԱՀ | Գին ՀՀ դրամ | Արժեք ՀՀ դրամ | ԱԱՀ | Գին ՀՀ դրամ | |
| 1 | Ջուզեպպե ՍՊԸ | 33333333 | 20% | 39999999.6 | 32572500 | 20% | 39087000.00 | |
| 1 | ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ | 51055500 | 20% | 61266600 | 51055500 | 20% | 61266600.00 | Մերժված |
| 1 | ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ | 120000000 | 20% | 144000000 | 120000000 | 20% | 144000000.00 | Մերժված |
| 2 | Ջուզեպպե ՍՊԸ | 37900000 | 20% | 45480000 | 37900000 | 20% | 45480000.00 | |
| 2 | ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ | 120000000 | 20% | 144000000 | 120000000 | 20% | 144000000.00 | Մերժված |

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 12.04.2022թ.՝ ժամը 15:32-ին և

- 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով Ջուզեպպե ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

**7. Տեղեկատվություն՝ գնահատող հանձնաժողովի նիստի կասեցման վերաբերյալ.**
1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Ջուզեպպե ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) հայտը գնահատելիս գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ Մասնակիցը ներառված է www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակած՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 06.04.2022թ.-ից մինչև 06.04.2024թ. ժամկետով:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Համակարգում հնարավոր չէ տեսնել Մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրը՝ սույն գնման ընթացակարգին Մասնակցի մասնակցության իրավունքը գնահատելու և գնման ընթացակարգի հետագա ընթացքն ապահովելու համար գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել, գրությամբ դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/16» ծածկագրով գնման ընթացակարգին Մասնակցի կողմից հայտը ներկայացնելու օրվա վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով (Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա միակ փաստաթուղթը՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**8. Գնահատող հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստ հրավիրել ՀՀ ֆինանսների նախարարությունից պատասխան գրության ստացմանը հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 15:00-ին:**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Խորեն Պետրոսյան

_____ Արթուր Թամրազյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Արուս Խաչատրյան

## ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման**

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/16» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է Դատական դեպարտամենտի կարիքների համար լազերային տպիչների և ձայնագրառման համակարգերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/16» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում 10.04.2022թ.-ին՝ ժամը 13:40-ին գնահատող հանձնաժողովի քարտուղարի ddgnumner@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին hovhannes.baburyan@unicomp.am էլեկտրոնային փոստի հասցեից ստացված նամակը (ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից) և դրա ուսումնասիրման արդյունքում գնահատող հանձնաժողովի 11.04.2022թ.-ի որոշումը.

| Ներկայացված հիմնավորումներ | Հիմնավորումների ուսումնասիրման արդյունքում գնահատող հանձնաժողովի որոշում |
|---|---|
| *«Հարգելի մրցութային հանձնաժողով,<br>Յունիքոմի ՓԲԸ-ն հանդիսանում է SRS ընկերության միակ պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում: Ուսումնասիրելով Ձեր կողմից հայտարարված մրցույթի փաթեթը, հայտնում ենք, որը մրցույթի տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հին տարբերակի Femido համակարգին, որը այժմ չի արտադրվում: Առկա համակարգերը ունեն մի փոքր այլ տեխնիկական բնութագրեր: Առաջարկում ենք փոփոխել հետևյալ տեխնիկական բնութագրերը հաշվի առնելով ժամանակակից պահանջները.<br>Ֆեմիդա ձայնագրառման համակարգի լրակազմում ներառված տպիչի համար սահմանել նույն պահանջները, ինչ սահմանված են 1–ին լոտով դրված տպիչի համար, նույնատիպ սարքեր ունենալու համար<br>Թարմացնել Ֆեմիդա ձայնագրառման համակարգի բնութագրերը՝ հաշվի առնելով, որ նոր մոդելի միկշերը USB միացումով է, այլևս չկա ձայնային սալիկ,<br>Ուղղել անխափան սնուցման սարքի բնութագրում առկա մուտքային լարման փիրույթում առկա վրիպակը, սահմանելով նաև ավտոնոմ աշխատանքի ժամանակահատվածի պահանջ, հոսանքի փարտանումների դեպքում ինֆորմացիայի կորստից հնարավորինս խուսափելու համար:<br>Ստորև ներկայացնում ենք առաջարկվող փոփոխություններով տարբերակը՝ պարզաբանումներով, որտեղ հաշվի են առնված հայկական շուկայում առկա բարձրորակ արտադրանքները.<br>Լազերային տպիչ՝<br>• «առաջին տպվող էջի դուրս գալու ժամանակահատվածը՝ մինչև 6.3վ.», առաջարկում ենք սահմանել «7 վրկ» ինչպես առաջին լոտով* | *««ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/16» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում 2-րդ չափաբաժնի մասով հնարավոր մասնակիցների կողմից հայտեր չներկայացվելու և ընթացակարգը հիշյալ չափաբաժնի մասով չկայացած հայտարարվելու դեպքում, հետագայում նմանատիպ ապրանքատեսակի ձեռքբերում իրականացնելիս պատվիրատուի կողմից կքննարկվեն ներկայացված առաջարկները:»* |

| | |
|---|---|
| *սահմանված գպիչի դեպքում՝ մրցակցության ապահովման նպատակով*<br>*• «ամսական ծանրաբեռնվածությունը՝ մինչև 80000 էջ», առաջարկում ենք սահմանել «50000 էջ» ինչպես առաջին լուծով սահմանված գպիչի դեպքում՝ մրցակցության ապահովման նպատակով*<br>*• «լրացուցիչ քարթրիջ, սև (առնվազն 9000 էջ)», առաջարկում ենք սահմանել «7000 էջ»՝ մրցակցության ապահովման նպատակով*<br>*• «պրոցեսորի արագագործություն՝ առնվազն 1200 MHz», առաջարկում ենք սահմանել «800MHz» ինչպես առաջին լուծով սահմանված գպիչի դեպքում՝ մրցակցության ապահովման նպատակով*<br>*Անխափան սնուցման սարք՝*<br>*• «850ՎԱ», առաջարկում ենք սահմանել «650VA, 360Watt» ՝ մրցակցության ապահովման նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով համակարգչի և մոնիտորի էներգախնայողությունը*<br>*• «մուտքային լարման տիրույթ՝ 140-310Վ», քանի որ նման սահմանված մուտքային տիրույթով միաֆազ ԱՍՍ-ներ չկան, առաջարկում ենք սահմանել «180-260Վ»՝ մրցակցության ապահովման նպատակով*<br>*• Ավելացնել նմանատիպ պահանջ «50% բեռնվածությամբ պետք է ապահովի առնվազն 10 րոպե ավտոնոմ աշխատանք մարտկոցի սնուցումով»*<br>*• «անցման ժամանակահատված՝ 4-8Մվ», առաջարկում ենք սահմանել «6-10Մվ»՝ մրցակցության ապահովման նպատակով*<br>*• ելքային բնիկներ՝ առնվազն երկու հատ «բրիտանական ստանդարտի կամ առնվազն երկու հատ Schuko ստանդարտի» արտահայտության փոխարեն սահմանել առաջարկվող մոնիտորի և համակարգչի լարերի հետ համատեղելի:*<br>*Դատական ձայնագրառման համակարգ՝*<br>*• «ձայնային սալիկ», քանի որ նոր սերնդի Ֆեմիդա միկշերը USB միացումով է, այլևս չկա ձայնային սալիկ»:* | |

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/16» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով:

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Դատական դեպարտամենտի կարիքների համար լազերային տպիչների և ձայնագրառման համակարգերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/16» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «20» ապրիլի 2022թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Խորեն Պետրոսյան՝** Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի պարտականությունները ժամանակավորապես կատարող, համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

**Արթուր Թամրազյան՝** Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

**Տիգրան Զեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարարի ժամանակավոր պաշտոնակատար

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

**1. Ի պատասխան Դատական դեպարտամենտի 13/04/2022թ. թիվ ԴԴ-3-Ե-3006 ԴԴ/168-22 գրության (կցվում է)՝ 19/04/2022թ. ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել է թիվ 26/26-1/6747-2022 գրությունը (կցվում է), որում նշված է, որ ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/16 ծածկագրով գնման ընթացակարգին Ջուզեպպե ՍՊԸ-ի կողմից մասնակցության հայտը ներկայացվել է 05/04/2022թ. ժամը 22:01:27-ին:**

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված գրությունը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 18)-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց շարունակել 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Ջուզեպպե ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) կողմից ներկայացված հայտի գնահատումը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**2. Տվյալներ՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի՝ մուտքագրման (լրացման) մասին.**

2.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա է էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1), ներկայացված հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված N 1.2 կամ Հավելված N 1.3) և հայտի ապահովումը.

2.2 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով Համակարգում Մասնակցի կողմից մուտքագրված (լրացված) չեն առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**3. Տվյալներ՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտի /հայտում առկա դիմում-հայտարարության/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) գործունեության հասցեն լրացված է ոչ ամբողջական, ռուսերեն լեզվով Մասնակցի անվանումը լրացված չէ (լրացված է Մասնակցի հայերեն անվանումը), ինչպես նաև փաստաթուղթը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովը որոշեց.**

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2022թ. ապրիլի 22-ին, ժամը 12:00-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովի քարտուղարին.**

Ղեկավարվելով Կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/16» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11 կետի պահանջներով՝ հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել Մասնակցին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **ապրիլի 21-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Ընդ որում, հայտի ապահովումը բանկային երաշխիքի ձևով ներկայացվելու դեպքում Մասնակիցը բանկային երաշխիքի բնօրինակը՝ **ուղեկցող գրությամբ** գնահատող հանձնաժողովին պետք է ներկայացնի մինչև սույն թվականի **ապրիլի 21-ի՝ Երևանի ժամանակով ժամը 18:00-ն ներառյալ**:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Խորեն Պետրոսյան

_____ Արթուր Թամրազյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Արուս Խաչատրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք. Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ-3-Ե-Ե-3006 ԴԴ/168-22

«13» ապրիլի 2022թ.

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ

*Հարգելի՛ պարոն Ավանեսյան,*

Սույնով տեղեկացվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար լազերային տպիչների և ձայնագրառման համակարգերի ձեռքբերման նպատակով 04.04.2022թ.-ին eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով հրապարակվել է «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/16» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգ: Նշված ընթացակարգի շրջանակում 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել Ջուզեպպե ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 01034318): Աճուրդի արդյունքում 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով Ջուզեպպե ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը գբաղեցրած մասնակից (այսուհետ՝ Մասնակից):

13.04.2022թ.-ին հրավիրված հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում Մասնակցի հայտը գնահատելիս գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Մասնակիցը ներառված է www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակած՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 06.04.2022թ.-ից մինչև 06.04.2024թ. ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Համակարգում հնարավոր չէ տեսնել Մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրը՝ խնդրում ենք տալ տեղեկատվություն «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/16» ծածկագրով գնման ընթացակարգին Մասնակցի կողմից հայտը ներկայացնելու օրվա վերաբերյալ՝ նշված գնման ընթացակարգին Մասնակցի մասնակցության իրավունքը գնահատելու և գնման ընթացակարգի հետագա ընթացքն ապահովելու համար (Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա միակ փաստաթուղթը՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ):

ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ, ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ
ՏԵՂԱԿԱԼԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ԽԱՉԻԿ ՂԱՋԱՐՅԱՆ

*Կատ՝. Նյութատեխնիկական ապահովման և գնումների հանձնաժողովի վարչություն*
*Հեռ.՝ (+374 10) 511-787*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am

Հեռ.՝ (+374 11) 800 156, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

26/26-1/6747-2022 18.04.22

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Ի պատասխան 13/04/2022թ.
թիվ ԴԴ/168-22 գրության

Հայտնում ենք, որ գրությամբ բարձրացրած հարցի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող փորձագետին:

Վերջինս տեղեկացրել է, որ ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/16 ծածկագրով գնման ընթացակարգին Ջուզեպպե ՍՊԸ -ի կողմից մասնակցության հայտը ներկայացվել է 05/04/2022թ. ժամը 22:01:27 -ին:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

4/18/2022

ՍԵՐԳԵՅ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Signed by: SHAHNAZARYAN SERGEY 1202770106 ՍԵՐԳԵՅ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Գնումների քաղաքականության վարչություն
հեռ. 011 289328

Մ 5808
19.04.22թ

Screenshot 2022-04-18 at 17-41-08 Ընթացկարագին հայտի ներկայացնելու օրվա վերաբերյալ ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22_16 - In progress - Eauction - Weblab.png

AA Albert Adamyan (Weblab)

ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/16 ծածկագրով ընթացակարգին
Ցուզեպպե ՍՊԸ-ն մասնակցության հայտն համակարգում
ներկայացրել է 05-04-2022թ ժամը 22:01:27 ին:

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Դատական դեպարտամենտի կարիքների համար լազերային տպիչների և ձայնագրառման համակարգերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/16» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «22» ապրիլի 2022թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Խորեն Պետրոսյան՝** Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի պարտականությունները ժամանակավորապես կատարող, համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

**Արթուր Թամրազյան՝** Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

**Տիգրան Զեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարարի ժամանակավոր պաշտոնակատար

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

**1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/16» ծածկագրով ընթացակարգի շրջանակում Ջուզեպպե ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտի գնահատման արդյունքի վերաբերյալ.**

Ջուզեպպե ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով Ջուզեպպե ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**2. Տվյալներ՝ ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Խորեն Պետրոսյան

_____ Արթուր Թամրազյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝

_____ Արուս Խաչատրյան